ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024 թվականի № 823

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԵՐՄԻՆԵ ՍԱՆԱՍԱՐԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ ***որոշում եմ***.

1. 2024 թվականի օգոստոսի 21-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հերմինե Սանասարի Նիկողոսյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2023 թվականի նոյեմբերի 17-ին կնքած թիվ 8 աշխատանքային պայմանագիրը:

Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել 2024 թվականի օգոստոսի 20-ը:

2. Սահմանված կարգով ու ժամկետում հաշվարկել և վճարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. № 824

ՎԱՉԻԿ ԷԴԻԿԻ ՄԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, Վաչիկ Էդիկի Մամյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող «MERCEDES-BENZ S 320» մակնիշի փոխադրամիջոցի (հաշվառման համարանիշ՝ 12UR002) գույքահարկը վճարելու պարտավորությունը չկատարելու համար՝ ***որոշում եմ.***

1. Վաչիկ Էդիկի Մամյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2. Վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2024 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 15:00-ին:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Վաչիկ Էդիկի Մամյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. № 825

ԱՇՈՏ ՄԻՔԱՅԵԼԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, Աշոտ Միքայելի Դավթյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող «JEEP GRAND CHEROKEE 4.0 I LIMITED» մակնիշի փոխադրամիջոցի (հաշվառման համարանիշ՝ 34ZR211) գույքահարկը վճարելու պարտավորությունը չկատարելու համար՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Միքայելի Դավթյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2. Վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2024 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Աշոտ Միքայելի Դավթյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. № 826

ԱՇՈՏ ՄԻՔԱՅԵԼԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, Աշոտ Միքայելի Դավթյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Երևանյան խճուղի 36 հասցեում գտնվող՝ 06-006-0137-0035 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի գույքահարկը վճարելու պարտավորությունը չկատարելու համար՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Միքայելի Դավթյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2. Վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2024 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 11:30-ին:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Աշոտ Միքայելի Դավթյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. № 827

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,04000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԶԱՐԵԹ ԵՓՐԵՄԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ, ՍՎԵՏԼԱՆԱ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ, ՄԵԼԻՆԵ ՆԱԶԱՐԵԹԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐԵԹԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Նազարեթ Եփրեմի Սուքիասյանի, Սվետլանա Անուշավանի Սուքիասյանի, Արթուր Նազարեթի Սուքիասյանի, Մելինե Նազարեթի Սուքիասյանի և Կարեն Նազարեթի Սուքիասյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0206-0017 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված հողամասի չափը կազմում է 0,04000 հեկտար, որը Նազարեթ Եփրեմի Սուքիասյանին, Սվետլանա Անուշավանի Սուքիասյանին, Արթուր Նազարեթի Սուքիասյանին, Մելինե Նազարեթի Սուքիասյանին և Կարեն Նազարեթի Սուքիասյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1990 թվականին կառուցված բնակելի տունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով Սպիտակի պատգամավորների քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հուլիսի

18-ի բնակելի տարածության մասին օրդերը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06011LF7ZN9A), «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Նազարեթ Եփրեմի Սուքիասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Նազարեթ Եփրեմի Սուքիասյանի (ծնված՝ 06.09.1958թ.), Սվետլանա Անուշավանի Սուքիասյանի (ծնված՝ 07.12.1960թ.), Արթուր Նազարեթի Սուքիասյանի (ծնված՝ 26.05.1984թ.), Մելինե Նազարեթի Սուքիասյանի (ծնված՝ 30.10.1982թ.) և Կարեն Նազարեթի Սուքիասյանի (ծնված՝ 05.06.1985թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0206-0017 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04000 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված 204,60 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ:

2. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0206-0017 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04000 հեկտար հողամասի հատակագիծը:

3. Նազարեթ Եփրեմի Սուքիասյանի, Սվետլանա Անուշավանի Սուքիասյանի, Արթուր Նազարեթի Սուքիասյանի, Մելինե Նազարեթի Սուքիասյանի և Կարեն Նազարեթի Սուքիասյանի կողմից տիրապետվող 0,04000 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 204,60 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Փյունիկ թաղամաս, 2/2 բնակելի տուն» հասցեն:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ_____Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. № 828

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-006-1783-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,00028 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հասցեի հայտի հաստատումը (քաղվածք՝ 060119GKGL4W)՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-1783-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված՝ բնակավայրերի նպատակային նշանակության 0,00028 հեկտար մակերեսով ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

2. 06-006-1783-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված՝ բնակավայրերի նպատակային նշանակության 0,00028 հեկտար մակերեսով ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Մարզ Լոռի, Սպիտակ համայնք ք.Սպիտակ, Ա. Մանուկյան փողոց, 5/5 հողամաս» հասցեն:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե.Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս՝ (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. № 829

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-006-0476-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,02396 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 060117CAZJMB) և «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0476-0009 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,02396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Դ. Տեր-Սիմոնյան փողոց, 3/5 հողամաս» հասցեն (փոստային դասիչ 1801):

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2024թ. № 830

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0260-0053 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,17441 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Լոռի-4 Հայաստանի Հանրպապետության Լոռու մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07062023-06-0059 վկայականը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0260-0053 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,17441 հեկտար մակերեսով այլ հողատեսքի հողամասի հողատեսքը փոփոխել վարելահող հողատեսքի:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ____________ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2024թ. № 831

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԹԻՎ 815 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 815 որոշման նախաբանում «0601136K6VY9» թվերի և տառերի փոխարեն սխալմամբ գրվել են «06011G2EBPSN» թվերն ու տառերը, ինչպես նաև որոշման 1-ին կետում «արհեստանոց» բառի փոխարեն սխալմամբ գրվել են «ավտոլվացման կետ» բառերը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 14-ի «Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, «Լիլիթ-95» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,4148 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին հասցե տրամադրելու մասին» թիվ 815 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման նախաբանում գրված «06011G2EBPSN» թվերը և տառերը փոխարինել «0601136K6VY9» թվերով ու տառերով,

2) որոշման 1-ին կետում գրված «ավտոլվացման կետ» բառերը փոխարինել «արհեստանոց» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ